ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/219

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24094-18 գրությամբ «Էդել» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր՝ «Սասնառ» ՍՊԸ-ի հետ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 18.12.2018թ. թիվ ԴՎԱ/5083 գրության հիման վրա, 25.12.2018թ. թիվ 27/26-3/24094-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էդել» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր՝ «Սասնառ» ՍՊԸ-ի հետ) (այսուհետ՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Էդել» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր՝ «Սասնառ» ՍՊԸ-ի հետ) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Էդել» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր՝ «Սասնառ» ՍՊԸ-ի հետ) կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Էդել» ՍՊԸ-ո (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր՝ «Սասնառ» ՍՊԸ-ի հետ), պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/219 ընթացակարգի շրջանակներում 28.12.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.12.2018թ. ԴՎԱ/5083 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էդէլ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր/ «Սասնառ» ՍՊԸ-ի հետ) միջև 07.03.2018թ. կնքված N ՀԲՄԾՁԲ-7/2-6 գնման պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. դեկտեմբերի 14-ին միակողմանի լուծել է ՀԲՄԾՁԲ-7/2-6 ծածկագրով պայմանագիրը և դրան կից 11.04.2018թ. կնքված թիվ 1 և 13.12.2018թ. կնքված թիվ 2 համաձայնագրերը:

Միաժամանակ հայտնել է, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 14.12.2018թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/219 ընթացակարգի շրջանակներում 28.12.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2018/219 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2018/219 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էդել» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր՝ «Սասնաո» ՍՊԸ-ի հետ) միջև 07.03.2018թ. կնքվել է «ՀԲՄԾՁԲ-7/2-6» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է մատուցելու հացաթխման ծառայություն, որի մատուցումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում:

2. Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ նախատեսվել է հացաթխման ծառայության արդյունքի /կաղապարային հացի/ հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Հաց կաղապարային, 1-ին տեսակի ցորենի ալյուրից , ՀՍՏ 31-99: Խոնավությունը 42-44%, թթվայնության աստիճանը՝ 2,5-3,5, քաշը՝ միջինը 700 գր+/-3% թույլատրելի շեղումով, ծակոտելիությունը՝ ոչ պակաս 65%-ից: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

3. Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ հացի առաքումը զորամասեր իրականացվում է զորամասերի կողմից նախորդ օրը տրված հայտերի հիման վրա՝ համապատասխան քանակի:

4. ՀԲՄԾՁԲ-7/2-6 ծածկագրով պայմանագրի համաձայն՝ կողմերի միջև 11.04.2018թ. կնքվել է թիվ 1 Համաձայնագիրը, իսկ 13.12.2018թ. թիվ 2 Համաձայնագիրը, որոնց 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին Մատուցել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունը և վճարել դրա համար:

5. «Էդել» ՍՊԸ-ին ուղղված 14.12.2018թ. թիվ ԴՎԱ/5027 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության

նախարարության և «Էդել» ՍՊԸ-ի՝ (համատեղ գործունեության պայմանագիր /կոնսորցիումի/ պայմանագիր «Սասնաո» ՍՊԸ-ի հետ), միջև 07.03.2018թ. կնքված թիվ ՀԲՄԾՁԲ-7/2-6 գնման պայմանագրին կից 11.04.2018թ. կնքված թիվ 1 և 13.12.2018թ. կնքված թիվ 2 համաձայնագրերի շրջանակներում Ընկերության կողմից 2018թ. Հացաթխման ծառայություն մատուցելու ընթացքում բազմիցս խախտվել են վերոնշյալ պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջները, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. դեկտեմբերի 14-ին միակողմանի լուծել է ՀԲՄԾՁԲ-7/2-6 ծածկագրով պայմանագիրը և դրան կից 11.04.018թ. կնքված թիվ 1 և 13.12.2018թ. կնքված թիվ 2 համաձայնագրերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24094-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.12.2018թ. թիվ ԴՎԱ/5083 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էդել» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր՝ «Սասնառ» ՍՊԸ-ի հետ) միջև 07.03.2018թ. կնքվել է «ՀԲՄԾՁԲ-7/2-6» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Էդել» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Սասնառ» ՍՊԸ-ի հետ) ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը

կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

«Էդել» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր՝ «Սասնաո» ՍՊԸ-ի հետ) պարտավորվել է մատուցելու հացաթխման ծառայություն, որի մատուցումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում:

Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ նախատեսվել է հացաթխման ծառայության արդյունքի /կաղապարային հացի/ հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Հաց կաղապարային, 1-ին տեսակի ցորենի ալյուրից, ՀՍՏ 31-99: Խոնավությունը 42-44%, թթվայնության աստիճանը՝ 2,5-3,5, քաշը՝ միջինը 700 գր+/-3% թույլատրելի շեղումով, ծակոտելիությունը՝ ոչ պակաս 65%-ից: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ հացի առաքումը զորամասեր իրականացվում է զորամասերի կողմից նախորդ օրը տրված հայտերի հիման վրա՝ համապատասխան քանակի:

ՀԲՄԾՁԲ-7/2-6 ծածկագրով պայմանագրի համաձայն՝ կողմերի միջև 11.04.2018թ. կնքվել է թիվ 1 Համաձայնագիրը, իսկ 13.12.2018թ. թիվ 2 Համաձայնագիրը, որոնց 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին Մատուցել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.4.1 ենթակետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Պայմանագրի 2.1.4 ենթակետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի մատակարարվող տարածաշրջաններից ՀՀ ՀՈՒ ԹՎ անասնաբուժական և ՌԲՎ հիգիենիկ և համաճարագային անվտանգության ծառայությունների կողմից, յուրաքանչյուրը ոչ պակաս ամիսը 4 անգամ կատարի նմուշառում և տրվի որակի և տեխնիկական բնութագրում նշված ցուցանիշների վերաբերյալ եզրակացություն:***

Հացի որակական ցուցանիշները ստուգելու նպատակով, հացի նմուշառումը կարող է իրականացվել զորամասից, հաց տեղափոխող մեքենայից, ինչպես նաև հացաթխման ծառայություն մատուցող կազմակերպությունից: Առաջին պահանջի դեպքում հացաթխման ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ապահովի իր ներկայացուցչի ներկայությունը, չներկայանալու դեպքում նմուշառումը իրականացվելու է առանց ներկայացուցչի՝ մնացած մասնակիցների ներկայությամբ:

Պայմանագրի 7.6 ենթակետի համաձայն՝ քանի որ պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր կնքելու միջոցով «Սասնաո» ՍՊԸ-ի հետ, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության պետը ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված 18.08.2018թ. թիվ h518/5272 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Աբովյանի, Երևանի և Իջևանի բաժինների ՌՈ աշխատակիցների կողմից 09.08.2018թ. և 10.08.2018թ. սահմանված կարգով ՀՀ ՊՆ 59559 /Երևան/, 24923 /Երևան/, 42285 /Երևան/, 88865 /Երևան/, 31549 /Երևան/, 51191

/Իջևան/, 5076 /Լուսակերտ/ զորամասերից հացից նմուշառումներ են իրականացրել փորձաքննության ենթարկելու նպատակով: Այնուհետև ստացված նմուշները ուղարկվել է ՀՀ ԶՈՒ ՌԲՎ հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության մասնագետներին՝ տեխնիկական բնութագրի հետ համեմատելու և եզրակացություն տալու համար: 15.08.2018թ. ստացված լաբորատոր փորձաքննության արձանագրությունների ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ նմուշառված հացից 3 նմուշ զանգվածի ցուցանիշով չեն համապատասխանում սահմանված նորմաներին /պայմանագրին թիվ ՀԲՄԾԶԲ-7/2-6 առ 07.03.2018թ., ՀՍՏ 31-99/:

Փափուկ միջուկի խոնավության ցուցանիշով հացի 2 նմուշ չեն համապատասխանում սահմանված նորմաներին:

Փափուկ միջուկի թթվայնության ցուցանիշներից 7 նմուշ չեն համապատասխանում սահմանված նորմաներին:

Փափուկ միջուկի ծակոտկենության ցուցանիշով բոլոր հացերի նմուշները համապատասխանում են սահմանված նորմաներին:

ՀՀ ՊՆ 55076 զորամասից նմուշառված հացերից 1 նմուշ իր ֆիզիկո-քիմիական ցուցանիշներով համապատասխանում է սահմանված նորմաներին: 2-րդ նմուշը փաստացի քաշի և փափուկ միջուկի խոնավության ցուցանիշներով չի համապատասխանում սահմանված նորմաներին՝ հացի զանգվածը կազմել է 676 գրամ /նորմա 700 +-3% ըստ պայմանագրի/, խոնավության /փափուկ միջուկի/ 45% /նորմա 42-44 % ըստ պայմանագրի/: Բացի այդ ռազմական ոստիկանության կողմից 11.04.2018թ. ՀՀ ՊՆ 20440 զորմասից վերցված հացի 1 նմուշը արտաքին տեսքով չի համապատասխանել սահմանված նորմաներին /հացի մակերևույթին եղել է 1սմ-ից ավելի ճեղքվածք/ և հացի նմուշում հայտնաբերվել է պարկի թել: Զորամասից ներկայացվել է կես հաց, որի մեջ եղել է օտար մարմին, կպած հացի փափուկ միջուկին /կրծողների արտաթորանք/:

03.05.2018թ. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ դեպարտամենտի պետի ՊԺԿ-ի կողմից զեկուցվել է ՀՀ պաշտպանության նախարարին, այն մասին, որ սույն թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում արձանագրվել է «Էդել» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական բնութագրին չհամապատասխանող հացի մատակարարման 6 դեպք և 27.04.2018թ. գանձվել է 1 329 579 ՀՀ դրամ տուգանք, առաջարկվել է վերոնշյալ պայմանագրի շրջանակներում

մատակարար կազմակերպության կողմից ևս մեկ նմանատիպ խախտման դեպքում պայմանագիրը միակողմանի լուծել՝ օրենքից բխող բոլոր հետևանքներով:

«Էդել» ՍՊԸ-ին ուղղված 14.12.2018թ. թիվ ԴՎԱ/5027 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էդել» ՍՊԸ-ի՝ (համատեղ գործունեության պայմանագիր /կոնսորցիում/ «Սասնառ»ՍՊԸ-ի հետ), միջև 07.03.2018թ. կնքված թիվ ՀԲՄԾՁԲ-7/2-6 գնման պայմանագրին կից 11.04.2018թ. կնքված թիվ 1 և 13.12.2018թ. կնքված թիվ 2 համաձայնագրերի շրջանակներում Ընկերության կողմից 2018թ. հացաթխման ծառայություն մատուցելու ընթացքում բազմիցս խախտվել են վերոնշյալ պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջները, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. դեկտեմբերի 14-ին միակողմանի լուծել է ՀԲՄԾՁԲ-7/2-6 ծածկագրով պայմանագիրը և դրան կից 11.04.018թ. կնքված թիվ 1 և 13.12.2018թ. կնքված թիվ 2 համաձայնագրերը:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված, արձանագրում եմ, որ «Էդել» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Սասնառ» ՍՊԸ-ի հետ) ՀՀ պաշտպանության նախարարության և Կոնսորցիումի միջև 07.03.2018թ. կնքված «ՀԲՄԾՁԲ-7/2-6» ծածկագրով պայմանագրի շրջանակներում չի իրականացրել պայմանագրի N 1 հավելվածով սահմանված

պահանջներին համապատասխան ծառայության մատուցման իր պարտականությունն, էականորեն խախտելով Պայմանագիրը, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «Էդել» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Սասնառ» ՍՊԸ-ի հետ) թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24094-18 գրությամբ «Էդել» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր՝ «Սասնառ» ՍՊԸ-ի հետ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էդել» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր՝ «Սասնառ» ՍՊԸ-ի հետ) ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ